

« Լիւսիաս դուքսն զբնակումիւն իւր ի Սատաղացոց քաղաքին աճնելով, զորս զտանքը ի գառասին յայնմիկ սուրբ արս և կանայս . . . արձակէր կապանօք . . . առ Ազրիկոզայս զատաւոր ի մայրաքաղաքն Սիրաստացոց<sup>1</sup>», ուր Քատասուեցն վկայեցին Ցէ 6ին, և իրենց գտառակիցք՝ Քառասուն և հինգ Ց17ին։

Թուիթ թէ աւանդութեան և պատմութեան յառաջազմ և ապահով քայլերն մի առ մի համառօտի ցուցին մեզ եպիսկոպոսաց յաջորդութիւն և քրիստոնէից բազմութիւն մը (որք անտարակոյս ունէին իրենց ինամարկու քահանաներն ալ, ապա թէ ոչ՝ ո՞վ էր իրենց հոգուն սնունդ և զօրութիւն տուող) Հայաստան աշխարհի մէջ. և հասանը, մասնաւոն թէ անցանք ալ, Դ գարուն սեմոց լրաց կոխեցինք, ուր ընդ առաջ կ'ելլի մեզ Ս. Գրիգոր երկրորդ Լուսաւորիչ Հայաստանայց եկեղեցոյ։

Եւ ի կնիք ակնարկիս, մեզ մեծապէս և յայժ հաւանական, մանաւանդ թէ ըստ վերոշեալ հաւաստաց պատմութեան և աւանդութեան՝ գրեթէ ստոյզ թուի՛ թէ Հայաստանեայց եկեղեցին ունեցեր է մինչեւ ի Ա. Լուսաւորի՛ (եթէ չենք ոզեր զնել արգասիք մը տունց պատմասի) իւր աւետարանիչ առաջելոց հաստատած նուիրապետութեան անընդհատ յաջորդութիւնը։

Այդ միայն էր միակ նպատակ մեր համառօտ և սղագիծ ակնարկին։

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

Հ. Հ. Մ. Աւ. Նոյն մատեան. Հա. Թ. էջք 484-485. — Աքդարու զրոյցի մարին ալ ըստ վերջին հետազոտութեանց՝ Հմտու. *Dictionnaire de Théologie Catholique*. Paris, 1899. Յօդուած. D. I. Parisot առորագիտին։

**ԲԱՆԱՍԻՐ.** — նուամահայ քաթոլիկակամ համեցս։  
Գիմնէ 20 ֆր. — Հասցէ՝ M. BASMADJIAN.  
(112. B-d. Rueochouart)

**PARIS**

ՆԿԱՐԱԳԻՐ ԲՆԱՇԽԱՐՀԻ

## ԱՍՏԱՊԱՏ


**ԱՍՏԱՊԱՏ** կամ ԱՊԱՄԱՍԱՊԱՏ. — Երբեմն հաշակաւոր գիւղաքարագր Սիրնեաց Նախաւան գաւառի մէջ Երասիսայ ձախակողմը։ Այսուն կը յիշէ նախ թովմա Արծրունին՝ երբ խրամ աւանին համար կ'ըսէ թէ կը գանսուի « ի ները Աստապատոյ վանացն », և խաչիկ ՈՒ կաթողիկոսի կոնդակին մէջ 976 թուին։ Կը յիշէ նաեւ Օրբելիան պատմիը գիշ կոչելով, որոն մօս ԺԲ գարու կիսոն, Սիրնեաց Բարսեղ եպիսկոպոսը Զորիով Երասին զետք ինկնալով և խեցուելով, հանցին և տարին թաղեցին Մաղարոյաց վանքը։ Ի վերջոյ տեղի բարգաւաճելով և բազմամարդ զանալով կոչուեր է գիշաքաղաք, ԺԲ գարու վերջերը Միհանուղաց հակառակորդ Մաղարին Ղրիմեցին՝ հոս զպոց հաստատեց Սարգիս վարդապետի տեղութեան տակ, ասկէց էր նոյն ժամանակին Բաղեցին աշակերտ Աւետիս վարդապետը։

ԺԵ գարու սկիզբը Շահ Աբաս գերի տարաւ Աստապատու բնակիչներն ի Պարսս, և ըստ պատմելոյ Զաքարիա պատմէի (Ա. Ի.), իրեն իրեւ հարճ առաւ կիւզէլ (Փեղեցիկ) անուամբ Աստապատի հայազգի կին մը, որ յետոյ զանալով իւր հայրենիքը, և հաւատաւորաց վանք մտնելով և պաշխարելով վահճանած է։ — Աստապատ շատ անգամներ Պարսից ասպատակութեանց ենթակայ լինելով, երթալով անշրացած է և առակաբնակ զիւղ մը գարձած, այնպէս որ ԺԹ գարու առաջին քառորդի մէջ, Պարսից թագածառնդ Ապագա Միրզան, ապամագիտական նպատակով այն մնացած ժողովուրին ալ ուրիշ տեղ փոխադրեց. Այնուհետեւ եւթուացիք ճարտարապետաց իորհորով, մասամբ մը ամայի շնորհեր քակելով, շնեց Աստապատի տեղը մեծ մեծ ամրոց մը, ցառակուսի, ընդարձակ պարիսպներով և խրամով. Այս

ամրոցի մէջ զրաւ զորքեր և զննքեր և զինուարական ամենայն ռազմավալները և 20 թշնամոթները թագամատանցի անուամբ ամբողջը կոչուեցաւ Ապավասապատ. բայց քիչ օպտակար կրցաւ ըլլալ, վասն զի փոխանակ հիմունքը մեծամեծ քարերով հաստատուն զնելու, վերին կողմերը ծանրացուցած էին խշոր քարերով, որով և շուտով սկսաւ քակտի, և ապա վրայ հասաւ ինուաց պատերազմը, որը գրեթե առանց աշխատութեան տիրեցին 1827ին. Այժմ բոլորսին ամայի և աւերակ վիճակի մէջ կը գտնուի: Յիշատակաց արժանի է Աստավատու մեծակառոցի եկեղեցին՝ շինուած նախնի բնակիչնե-

րէն, և ունի բազմաթիւ արձանագրութիւններ գրուած ԺԵ-ԺԸ դարու սկիզբները: Եկեղեցին կառուցուած է Ս. Վարդանայ Մամիկոննան զօրավարի տնուամբ և կողմանց բնակիչը Աստավատ անուան ստուգաբանութեան համար կ'աւանդեն, թէ մեծին Վարդանայ և ընկերաց նահատակութեննն վերջը, անոնց մարմինները հոս կը բերեն, և զանոնը թաղելու համար պատանած ձամանակ, Մակուայ թնակչաց երեւելիներէն կու գանգանը կ'առնուն և կը տանին կ'ամփոփեն Մակուայ մէջ. և այն օրէն այս տեղս կոչուեցաւ Աստավատ՝ իր աստ պատաճ:

Աստավատու Ս. Վարդան եկեղեցին բա-



Աստավատ, Ապավատի Միրզայի բերդը:

տական մեծ է և հաստատուած է չորս սիւներու վրայ. ունի բարձրաբերձ գմբեթ, մէկ սեղան, երկու աւանդատուն և ընդարձակ գաւիթ: Տաճարը վերանորոգած են ԺԷ դարու մէջ, 1655ին ոմն Խոչյա Սափար, ըստ արձանագրին, իւր հաւալ ընչիշը կառուցանել սուած է երաշազան յօրինմաք Ս. Վարդանայ մեծ զուոր, որուն ճակատը, ինչպէս կը տեսնուի պատկերի մէջ, զարդարուած է այլ և այլ ճարտարաբռեսա քանզակներով: Դրան վրայ կայ Տիրամօր քանզակապատկերը, մանուկ Յիսուսը զիրկը և զիմացը ծնրագիր մէկը, թերեւս եկեղեցւայս շինովը. կան նաև հրեշտականներ որոնք թագեր բռնած են Տիրուհոյ և ծնրագիր անձի մը զիմոց վրայ: Այս քան-

զակապատկերի վերը և երկու կողմերը կը տեսնուին զարդարուն խաչարձաններ՝ որոց արձանագրութիւնը, մասամբ անընթեռնի են: Դրան կամարի երկու կողմերն եւս կան արձանագրութիւնը և խաչարձանները: Եկեղեցւ աւազանն սեաւ կճէ է, և ունի ԲԺՇ ( = 1681) թուականաւ նուրիբատուողաց արձանագրութիւն: Գամիթի սիներէն միայն վրայ զրուած է ԲժՇՌ ( = 1703) թուին եկեղեցւոյ վերակացու Մարտիրոս վարդապետի յիշատակազիրը, որ կ'երեւի թէ շատ աշխատութեամբ աւարտած է գամիթի շինութիւնը կամ նորոգութիւնը: Ս. Վարդանայ եկեղեցւոյն կից և անկից կը մտցափ ուրիշ փոքր, սագաշէն և կարմիր աղիւաներով ե-

կեղեցի մը Ա. Պետրոս և Պօլոս առաքելոց նույնութեած: Ապասո Միքազ Թագահանդի օրով, վերոյիշեալ գեղեցիաշն Ա. Վարդանայ Եկեղեցին ամրոցի մէջ մաս, և ամբարձուց զարձաւ:

Աստապատու գետեղերեայ զիրբն և Նախնաւանի աւելի մերձ լինեն, շատ նպաստաւոր կին իրեն բարգաւաճանաց. ասոր կը վկայէ նաեւ Թաւեանի՛ որ Ժի զարու կիսուն երկու օր հոյն մեաց, և կ'անուանէ քաղաք փոքր բայց շատ գեղեցիկ, որոյ իրաքանչիւր տուն ունէր աղբիւրներ և մէջը կային և կարաւանատունք: Սահմանները յօւսմի և այգեւէտ կը նկարագրէ նոյն ուղեւորը, որը և գտած էր Ծինաս, Ronas, Կոյուած կարմրաներկ արմատը: Թաւեանի՛, Ա. 47:

— Վաճառականութեամբ հեռու աշխարհներ գացող Աստապատցիներէն յիշենք Խաձայ Յովհաննեն ոմն որդի Սահմակայ, որ Վենետիկ լինելով 4 թ 66 ին, Ա. Խաչի եկեղեցւոյ նորոգութեան համար ընճայեր է երկու սին: Ասոր ժամանակակից կը յիշուին Բարտեղ, Թորոս և Առուին վաճառականներ, որոնց արծաթի անօիններ և սպասներ նույն պուած են Անկիւրիոյ Ա. Աստուածածնի վանաց. զորս նոյն վանաց յիշատակազիրն Ազտապատեցի կ'անուանէ: — Աստապատու աղջայնոց արուեստից և այլ յատկութեանց վայ տեղեկութիւն շն տար մեր ժամանակիրը, և գելզարալզարէն աւելի կը հչալիքն անոր վանքը, որ կը կոչուի Աստապատայ վանք և գրեթէ Զ մղոն հեռու կը գտնուի հարաւային արեւելեան կողմը, Երասխայ արեւելեան եղերը քարուս լիրան մը սառուտին վրայ՝ որ գետին երեսէն բարձր է մոտ 60 մետր: Կը կոչուի նաեւ Քարստալի վանք և շնորհին կարմրագոյն բարանց պատճառաւ կարմիր վանք: Եկեղեցին կառուցուած է պարսպաց մէջտեղը բարձր զրիւք, շափաւոր մեծութեամբ, հիմերը քարով և որմերը թրծեալ աղիւառվ շինուած: Հաստատուած է երկու սեանց վրայ, ունի մէկ սեղան, երկու աւանդատուն, մէկ զուս արեւմտակողմը, քարաշն գաւիթ երկու սեանց վրայ, և փոքրիկ զանգակատուն մը: իսկ եկեղեցւոյն կաթողիկէն բարձրացած է տա-

նեաց մէջտեղէն: Յայտնի է մէ վանացս կամ եկեղեցւոյս առաջին շինութեան ժամանակին շատ հին է, բայ ոմանց Զբաց զարու մէջ կառուցուած: Խաչիկ Ակ կոնդակի մէջ կը յիշուի 976 ին, և նոյն թուականաւ խաչիմ մի եւս կը զանսւի ագուցուած տաճարի զրան աշ կողմը: Կան նաեւ 1277, 1474, 1477 և 1484 թուականներ, որոց ոմանք ունին համառոտ արձանագրութիւնը: Վանացս տաճարի և զամբի մէջ կան բանի մը վարդապետաց թիերեւ և առաջնորդաց վանացս՝ զամբաններ, մարմարինէ քարերով և արձանագրութիւններով: Գամբաններէն մին՝ որ ունի 1678 թուականաւ արձանագրութիւն, կը վերարկի Յակով զարդարականի վարդապետի պատմակից էր պատմիչ Զարարիս վարդապետին, և նորոգած ու պայծառացուցած է վանքս շինութիւններով: Գամբին մէջ՝ արեւմտեան հարաւային անկինը կը զանուի Յովսէկի արհիւեպիսկոպոսի պատմութիւնը, որոյ կամարդ կը վարդապետի կայ 1706 թուականաւ արձանագրութիւն: Սայն Յովսէկի արհիւեպիսկոպոս, յիշատակազիր մը գրածի համեմատ, վանացս առաջնորդ եղած ժամանակ, 1697 թուին սկսաւ նորոգել մենաստանս. «... ի կողմէ յարեւմտեան, կոփածոյ վիմօք, ներքնատնօր և վերնատնօր զարդարեալ կամարակապ»: Վանացս արտաքին պարիսալը կառուցուած է կարմիր կոփածոյ քարերով, բաւական բարձր՝ մանաւանդ հիւսային կողմանը, տեղայն աւելի ցած զիրք ունենալուն պատճառաւ: Այս պարիսալը ունի տեղ տեղ նոյնակս բարաշն բուրգեր, որոնք գեղեցկութիւն և մեծալվյալուչ կերպարանը մը կ'ընծային ամբողջ վանքին: Ունեցեր է ժամանակաւ և ներքնապարիսալ մը, որ երկու, արեւելեան և արեւմտեան մասանց կը բաժնէ ամբողջ վանքը, բայց քայլայուած է այժմ, և միայն կանգուն մասանց է անոր գրան քարաշն կամարը, որոյ մէջտեղը զրան վերի կողմը կայ խաչիմ, և անթուական արձանագրութիւն մը, պարիսալը նորոգայուց, որք են Աստապատցի քահանայիք և ծողովլուրդը: Վանացս արեւմտեան մասին մէջ է եկեղեցին, յորում նշանաւոր են քանի մը գեղեցիկ քանզակիները և ի միջի այլոց՝ Յիսուսի

մկրտութիւնն ներկայացնող խորաբանդակը : շնորհերը, զոմը և 60 ձիոց բաւական ախոռ  
Նոյն մասին մէջ են քարաշէն և կրինայարկ մը : Արեւելեան հիւսիսային անկիւնը կը զբա-  
ժնակարաններն, յաւ վիճակի մէջ : Արեւե-  
լեան մասի մէջ են վանացս միս կարեւոր վէնդէն գտնացս արտաքին կամարակապ, քա-  
րաշէն դուռը, որոյ վրայ կայ խաչվէմ և



Աստապատու Ս. Վարդան եկեղեցւոյ դուռը :

1707 Թուին արձանագրութիւն մը, Յովա-  
նեա վարդապետի, որ վերակացու եղած է Աստապատու բերդի շինութեան համար Ապ-  
ռակ վարդապետի, որ վերակացու եղած է պատութեան համար Ապ-  
ռակ վարդապետի, որ վերակացու եղած է պատութեան համար Ապ-  
ռակ վարդապետի, որ վերակացու եղած է պատութեան համար Ապ-

մենաստանի եկեղեցին, որ կ'ինկնար Աստապատու և կարմիր վանաց մէջտեղ Աստապատու այս երկրորդ մենաստանն կը կոչուէր Ս. Յովիաննէս, որոյ այժմ միայն տխուր աւերակներն կը տեսնուին.

Կարմիր վանքի առաջնորդ Նկողոյացոս վարդապետը 1834ին նորոգել տուաւ եկեղեցոյն որմոց հիմերը, որը ուրիշ շինքերու հետ բաւական վասուեցան 1840ին երկրաշարժէն։ Այժմ տակալին չեն է վանքը, և է ընկ տեսչութեամբ Նախնաւանու հոգեւոր կառավարութեան։ — Ռուսաց աշխարհահամարի մէջ նշանակուած է կարմիր վանք անուամբ հայարդակ զիւզ մը, որ թուի թէ կը գտնուի վանաց մօտ, ունի 17 տոն՝ իր 80 թնակչօք։ — Արահամ կաթողիկոսը 1736ին այցելելով Պատապատ, կ'ողբայ ու կը հառաչէ տեսնելով տեղույն դրից վայելչութինն և ամսյանախն, նոյն ժամանակ, կիրակի օր մը պատարափի սուրբ խորհուրդն կատարելով, կը ձեռնազրէ երեց եպիսկոպոսներ։ Որչափ և տխուր է Աստապատ իր ամայի շինքերով, սակայն զուարթ են տակալին իւր սահմանքն և զարդարուած են բազմաթիւ միզարեր ծառերով, յորս հոչակուած է ինձորն արքունական (պրոկ. սիսկ սուշրան), զեղձը, տանձն, ծիրանն, և այլն, կարմիր վանքի սահմանները, լերան կողերուն վրայ կը տեսնուին բրածոյ քարայրքեր, որոնք համարուած են զահնուց և գրոց պահարաններ։ — Համեստրունեանց, Ստորագր. թ. 297—304։ Միասկան, 507—54։

Հ. ՍՈՒԵՑԱՍ ԼՓՐԻԿՆԱԽ

\*\*\*\*\*

**ԲԻՒՐԱԿՆ** — կը նրաւարսկէ բանստիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ. Խմբ. Ս. Դաշտիան։ — Գիմն է 12 ֆռ.։

Հասցէ Direction du «Puraghn» Bahetché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

## ՀԱՅԿԱԿԱՆՆ ԵՐԱԾԵՑՈՒԹԻՒՆԻ

80 ԿՈՒԱՆ Ա.

Որպիտուրիւն՝ և Բնադրուշ եկեղեցական երգերու առ հասարակ, և մասնաւորապէս Հայոց երգերու։ Գոսկիրէի Հայոց եկիսկուպոսական եկեղեցոյն զիւարոր դպրավետին երածշտական գիտուրիւնը և համառոտուրիւն մեզի տռած տեղեկուրեանցն իշր արուեստին վրա։

**Բ**ԱՏ մեր անփոփոխ կարծեաց, եկեղեցական երգերն պէտք է առաւելապէս գրաւեն քննողաց ուշագրութիւնը. զի ազգայնութեան կնիքը կը ստահան և կը պահեն աշխարհիկ երգերէ աւելի, որովհետեւ ազատ են յարատեւ փոփոխութեանց, որոց գերի են միւսներն։ Հասարակաց ճաշակի փոփոխութեանց, նորութեան սիրոյն, և երբեմն նաև երգչաց քմահաճոյից համեմատ յարափոփոխ են արտաքին երգերը, և երբեմն օտար կերպարանը և օտար զարգեր կ'առնուն, մինչզե հոգեւորականց կը մնան անփոփոխ։ Անոնց հրապույն և պատճառած զուարձութիւնն կը ծառայեն մարգիկանց մէջ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու. իսկ կրօնական լուրջ երգերն՝ զմարդ Աստածոյ հետ միացնելու միջոց մի են, և համեստրար խորշում կը ներչնչեն իրեն յամենայնէ, որ կարող է իսակարել և նուաստացնել իւր բնութիւնը. աշխարհային ու-

4. Ներկայ տարսւան թագմավէպի պրակով սկսանք հայ երաժշտական խաղերու վրայ ուսուածաբութիւնն մը հրատարակել որուն յաջորդ մասերն չըրատարակել։ մը ընթերցուց կը ներկայացնենք նաև Եւրոպական զրատարակութեան մը մէջ (Description de L'Egypte. Tome quatorzième. Paris. էջ 324) եղած, ուսումնական բարձր յարակից Ս. L. F. Panckouckeի ուշագրաւ յօդուածին թարգմանութիւնը։